ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիա-Հայաստան պատգամավորական բարեկամության խմբի ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ խմբի ղեկավար Ռընե Ռուքեի եւ ուղեկցությամբ ԱԺ պատգամավոր Արա Բաբլոյանի: Խմբի կազմում էին նաեւ բարեկամության խմբի ղեկավարի տեղակալներ Վալերի Բուայեն, Գի Տիսիեն եւ բարեկամության խմբի վարչական քարտուղար Ժան-Պիեռ Դելանոյան:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին՝ կարեւորելով վերջիններիս կողմից հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերվող ազնիվ օգտակարությունն ու նվիրումը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդգծելով այն արդյունավոր համագործակցությունը, որ ձեւավորվել է շնորհիվ Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի, հույս հայտնեց, որ այն մշտապես պիտի նպաստի բարեկամ երկու ժողովուրդների հարաբերությունների զորացմանը:

Այնուհետեւ, խմբի ղեկավար Ռընե Ռուքեն անդրադարձ կատարեց եղբայրական կապերի առավել սերտացման ծրագրերին եւ խմբի առաքելությանը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց Ֆրանսիայի պատգամավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով Հայ Եկեղեցու կողմից իրականացվելիք միջոցառումներին, ինչպես նաեւ հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական հարաբերություններին: Զրույցի ընթացքում մտահոգություն արտահայտվեց Սիրիայում տիրող ծանր իրավիճակի եւ քրիստոնեական համայնքների վտանգված լինելու մասին, անդրադարձ կատարվեց սիրիահայ համայնքին, ինչպես նաեւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայությանը Հայ Եկեղեցու կողմից ցուցաբերվող զորակցությանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Դեկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ռումինիայի նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Սորին Վասիլեին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին